

Հայ Ռատի յանձնախումբի կոչին ընդառաջելով Գանատայի խորհրդարանի անդամներ
կը դատապարտեն Ատրպեյճանի յարձակողապաշտ քաղաքականութիւնը

Հայաստանի վրայ առաքվեյձանական յարձակապաշտ ռազմական գործողութիւններէն անմիջապէս ետք, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակն ու շրջանային յանձնախումբերը լծուելով գործի դիմեցին Գանատայի դաշնակցային եւ նահանգային խորհրդարաններու անդամներու, ինչպէս նաեւ գանատական քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներու, գատապարտելու համար առաքվեյձանական բռնութիւնները:

Չորեքշաբթի, 15 Յուլիս 2020-ին, Գանատայի Արտաքին Գործոց նախարար Ֆրանսուա-Ֆիլիպ Շամփայնի հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, որուն մէջ կը նշէր թէ՝ Գանատան մտահոգ է Հայ-Ատրպէյճանական սահմանին տեղի ունեցող բռնութիւններով:

Նոյն օրերուն, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Ատրպեյճանի բռնութիւնները դատապարտելու կոչին ընդառաջելով՝ զրառումներով Հանդէս եկան Գանատայի խորհրդարանի անդամներ:

Մանրամասնութիւնները կարդալ էջ 3:



**Գանատայի խորհրդարանի ընդդիմադիր
Պահպանողական կուսակցությունը կը
դատապարտէ ատրպէյնանական
չարձակողապաշտ վարքագիծը**

Կարդալ էջ 3

Գանատայի խորհրդարանի նիստի
ընթացքին պատգամաւոր Ֆայսալ Էլ Խուրի
կը դատապարտէ ատրպէճանական
յարձակողապաշտութիւնը

Կարգավ եջ 3

Հ.Յ.Դ. Բիւրոյի Յայտարարութիւն. «Միշտ պատրաստ ենք մեր բոլոր հնարաւորութիւններն ու կարողականութիւնը ի սպաս դնել Հայրենիքին»

**ՀՅԴ Գանատայի
Կեդրոնական կոմիտեի
լայտարարություն**

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտեն խստորեն կը դատապարտէ Հայաստանի պետական սահմանը խախտելու եւ ռազմական ներթափանցումի փորձ կատարելու ատրպէճանական բանակի յարձակապաշտ գործողութիւնները եւ Հայկական բնակավայրերը ու խաղաղ բնակիչ ութիւնը ատրպէճանական շրջատանիւնի թիրախ դարձնելու արարքները:



Ֆալտարարութիւնները կարդալ էջ 4



ՀՅԴ Գանատայի երիտասարդականի եւ ուսանողականի անդամները բողոքի ցույց կատարեցին Ատրպէյճանի դեսպանատան առջեւ, Կարդայ էջ 3

[illegible]

On continue de bien se protéger!



Toussez dans
votre coude



Lavez
vos mains



Gardez vos
distances



Couvrez
votre visage
(si moins de 2 mètres)

Obligatoire pour les
personnes âgées de 12 ans
et plus dans les **transports
en commun** et la plupart
des **lieux publics fermés
et partiellement couverts.**

[Québec.ca/coronavirus](https://quebec.ca/coronavirus)

☎ 1 877 644-4545

Votre
gouvernement

Québec

Գանատայի խորհրդարանի ընդդիմադիր Պահպանողական կուսակցութիւնը կը դատապարտէ ատրպէյճանական յարձակողապաշտ վարքագիծը

Գանատայի Հայ Դատի յանձնախումբին ուղղուած Յուլիս 21 թուակիր նամակով մը, Գանատայի խորհրդարանի պաշտօնական ընդդիմադիր Պահպանողական կուսակցութեան ղեկավար Անտրու Շիր խստօրէն դատապարտեց Հայաստանի հանդէպ ատրպէյճանական յարձակողապաշտ արարքները։

Նշելով որ միշտ հպարտ գգացած են Գանատայի Հայ Դատի յանձնախումբին հետ համագործակցելու առիթներով, ընդդիմութեան ղեկավարը նամակին մէջ կը յայտնէ, որ Պահպանողականեբրը միշտ արտայայտած են իրենց մտահոգութիւնը ի տես Արցախի եւ տարածաշրջանին մէջ կատաբուող բռնարարքներուն։ «Մենք կը շարունակենք կոչ ուղղել Գանատայի իշխանութիւններուն որպէսզի աջակցին Արցախի ժողովուրդի ազգային ինքնորոշման իրաւունքին», նամակին մէջ կը հաստատէ Անտրու Շիր։

Պահպանողական ղեկավարը նամակին մէջ կոչ կ’ուղղէ հակամարտող կողմերուն յարգելու հրադադարը եւ զօրակցութիւն կը յատնէ ԵԱՀԿ Մինսկի խմբակի խաղարար նախաձեռնութիւններուն։



Գանատայի Պահպանողական կուսակցութեան ղեկավարի թեկնածու եւ խորհրդարանի անդամ Էրիմ Օթուլ զօրակցութիւն կը յայտնէ հայ ժողովուրդին

Յուլիս 20–ին, Թուրքիոյ ցանցերուն վրայ կատարուած գրառումով մը, Գանատայի ընդդիմադիր Պահպանողական կուսակցութեան ղեկավարի պաշտօնի թեկնածու եւ խորհրդարանի անդամ Էրին Օթուլ անդրադառնալով հայ–ատրպէյճանական հակամարտութեան վերջին զարգացումներուն՝ զօրակցութիւն յայտնած է հայ ժողովուրդին։ Ան գրած է. «Հայ ժողովուրդի կողքին եմ, վշտակցութիւն կը յայտնեմ զոհուած հայ զինուորներու կորուստին համար եւ հրադադարի կոչ կ’ուղղեմ»։

Գանատայի խորհրդարանի գիստի ընթացքին պատգամաւոր Ֆայսալ Էլ Խուրի կը դատապարտէ ատրպէյճանական յարձակողապաշտութիւնը

Գանատայի խորհրդարանի Յուլիս 21–ի նիստի ընթացքին պատգամաւոր Ֆայսալ Էլ Խուրի դատապարտեց ատրպէյճանական յարձակողապաշտութիւնը։

Անտեսելով Միացեալ Ազգերու կազմակերպութեան կողմ համալարակի ճգնաժամի ընթացքին հրադադարը յարգելու, Թուրքիոյ անմիջական նեցուկը վայելող Ատրպէյճանի կառավարութիւնը սպառնաց ռմբակոծել Հայաստանի հիւլէայակայանը եւ հակամարտութեան ընթացքին թիրախ դարձուց անմեղ քաղաքացիներ, յայտարարեց պրն. Խուրին։

Իր ելոյթի աւարտին, ան անմիջական հրադադարի կոչ ուղղեց։

ՀՅԴ Գանատայի երիտասարդականի եւ ուսանողականի անդամները բողոքի ցոյց կատարեցին Ատրպէյճանի դեսպանատան առջեւ

Հայաստանի վրայ Ատրպէյճանի յարձակողապաշտ քաղաքականութիւնը դատապարտելու համար, Յուլիս 17ին, Գանատայի մօտ Ատրպէյճանի դեսպանատան առջեւ կայացաւ բողոքի ցոյց՝ կազմակերպութեամբ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գանատայի երիտասարդական միութեան եւ ՀՅԴ «Արմէն Գարօ» ուսանողական միութեան։

Համաճարակի կանխարգելման օրէնքներուն պատճառով, ցոյցին մասնակիցներու թիւը սահմանափակուած էր։ Յուցարարները յարգեցին դիմակներ կրելու եւ հեռաւորութիւն պահպանելու օրէնքները։

«Մի քանի օր առաջ Պաբուի փողոցներուն մէջ «մահ հայերուն» կ’աղաղակէին. Ահաւասիկ ողջ ենք եւ կը պայքարինք յանուն արդարութեան եւ խաղաղութեան։ ՀՅԴ Գանատայի երիտասարդականի եւ ուսանողականի անդամները հայ զինուորի կողքին են», «Հորիզոն»ին յայտնեց ՀՅԴ ԳեՄ–ի Կեդրոնական վարչութեան ատենապետ Մանուկ Ալեմեան։

Յուցացարարները Ատրպէյճանի դեսպանի տեղակալ Ֆուատ Ալիբեին հասցէադրուած նամակ մը յանձնեցին, ուր խստօրէն կը դատապարտուի Ատրպէյճանի յարձակողապաշտ քաղաքականութիւնը։ «Մինչ Հայաստանը կը փորձէ պաշտպանուիլ զինուորական յարձակումներէ, ձեր կառավարութիւնը խախտելով միջազգային օրէնքները՝ թիրախ կը դարձնէ անմեղ քաղաքացիներ եւ կը սպառնայ յարձակիլ Հայաստանի հիւլէակայանին վրայ։ Այս բոլորը յստակ ցուցանիշներ են, որ ձեր կառավարութեան զինուորական եւ քաղաքական ղեկավարութիւնը մտադրութիւն հունի հակամարտութեան խաղաղ լուծում գտնելու», նշուած է նամակին մէջ։

ՀՅԴ ԳեՄի եւ «Արմէն Գարօ» ուսանողականի անդամները Հայաստանի եւ Արցախի դրօշներով ցոյցը շարունակեցին Գանատայի խորհրդարանին դիմաց, ուր խօսք առաւ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Մհեր Գարազաշեան, ըսելով, որ ազգովին հայոց բանակի ու հայրենիքի պաշտպան հայ զինուորին կողքին ենք։

Ցոյցի աւարտին, առ ի զօրակցութիւն Հայրենիքին եւ հայոց բանակին՝ ՀՅԴ երիտասարդականի եւ ուսանողականի անդամները այցելեցին ՀՀ դեսպանատուն, ուր ընդունուեցան Գանատայի մօտ արտակարգ եւ լիազօր դեսպան տիկ. Անահիտ Յարութիւնեանի եւ հիւպատոս պրն. Արա Մկրտչեանի կողմէ։ ՀՀ Դեսպանը ողջոյնի եւ շնորհակալութեան խօսքով հանդէս եկաւ ցոյցի մասնակից երիտասարդներուն եւ ուսանողներուն։

Հայ Օգնութեան Միութեան Յայտարարութիւնը



Հայ Օգնութեան Միութիւնը, որպէս մարդասիրական, միջազգային հայկական կազմակերպութիւն եւ գործունեայ անդամ Մ.Ա.Կ.–ի Տնտեսական եւ Ընկերային Ցանձնաժողովին, խստօրէն կը դատապարտէ Յուլիս 12–էն ի վեր Ատրպէյճանի կողմէ Հայաստանի Հանրապետութեան հիւսիսարեւելեան շրջանի Տաւուշի մարզի սահմանամերձ գիւղերուն ուղղուած ռմբակոծումները եւ սահմանը խախտելու փորձերը։ Հայաստանի եւ Արցախի զոյգ հանրապետութիւններուն սպառնացող հակահայ այս քաղաքականութեան հետեւանքով թիրախաւորուած են խաղաղ բնակավայրեր՝ վտանգելով հայ քաղաքացիին կեանքը։

Ատրպէյճանի կառավարութիւնը իր ռազմատենչ քաղաքականութիւնը կը շարունակէ առաւելաբար օգտուելով «Քորոնա» ժահրին ստեղծած համաշխարհային ներկայ տագնապէն։ Առ այդ, կը դիմենք միջազգային հանրութեան եւ կառավարութիւններուն՝ դատապարտել Ատրպէյճանի կեցուածքը, քաղաքականութիւնն ու վերջին յարձակումները անտարբեր չմնալով թշնամական այս արարքին առաջ։ Նոյնանման գործողութիւններ կը սպառնան հայրենիքի եւ տարածաշրջանի խաղաղութեան, միաժամանակ խախտելով Մ.Ա.Կ.–ի Մարդկային իրաւանց սկզբունքները։

Բարձր գնահատելով Հայոց Բանակին կարողականութիւնն ու կամքը, Հայ Օգնութեան Միութիւնը, իր համահայկական կառոյցով, ինչպէս անցեալին, այսօր եւս նեցուկ կը կանգնի Հայրենիքին, Հայոց Բանակին եւ հայ ժողովուրդին՝ ի սպաս Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան եւ խաղաղութեան։ Հ.Օ.Մ.–ը, համայն հայութեան կողքին, կը սգայ Հայոց Բանակի չորս հերոսներուն մահը, որոնք իրենց կեանքին գնով պաշտպանեցին հայրենի հողը։

Հայ Դատի յանձնախումբի կոչին ընդառաջելով Գանատայի խորհրդարանի անդամներ կը դատապարտեն Ատրպէյճանի յարձակողապաշտ քաղաքականութիւնը

Հայաստանի վրայ ատրպէյճանական յարձկապաշտ ռազմական գործողութիւններէն անմիջապէս ետք, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակն ու չըջնալայն յանձնախումբերը լծուելով գործի դիմեցին Գանատայի դաշնակցային եւ նահանգային խորհրդարաններու անդամներու, ինչպէս նաեւ դանատական քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներու, դատապարտելու համար ատրպէյճանական բռնութիւնները։

Չորեքշաբթի, 15 Յուլիս 2020–ին, Գանատայի Արտաքին Գործոց նախարար Ֆրանսուա–Ֆրիլի Շամփայն հանդէս եկաւ յայտարարութեամբ մը, որուն մէջ կը նշէր թէ՝ Գանատան մտահոգ է Հայ–Ատրպէյճանական սահմանին տեղի ունեցող բռնութիւններով։

Նախարար Շամփայն կը շեշտէր, որ Եւրոպական Միութեան ՄԻՆՍԿ–ի Անվտանգութեան եւ Համագործակցութեան խումբի կոչերուն միանալով, Գանատան երկու կողմերուն կը յորդորէ անյապաղ ձեռնպահ մնալ ուժի կիրառութենէ, յարգել հրադարի պայմանաւորաւածութիւնն ու պաշտպանել քաղաքացիները։ Հակամարտութեան լուծման գործընթացը պէտք է հիմնուի Միջազգային իրաւունքի Հելսինկեան պայմանագրով ամրագրուած ուժի չկիրարման, տարածքային ամբողջականութեան եւ ինքնորոշման սկզբունքներուն վրայ։ Գանատայի Հայ Դատի յանձնախումբը գնահատելով հանդերձ Գանատայի արտգործ նախարարի յայտարարութիւնը՝ անբաւարար նկատեց զայն եւ պահանջեց ատրպէյճանական բռնարարքները դատապարտող յստակ յայտարարութիւն։

Նոյն օրերուն, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Ատրպէյճանի բռնութիւնները դատապարտելու կոչին ընդառաջելով գրառումներով հանդէս եկան Գանատայի խորհրդարանի անդամներ։

Գանատայի խորհրդարանի ընդդիմադիր Պահպանողական Կուսակցութեան անունով, Խորհրդարանի անդամ Պապ Սարոյա խստօրէն դատապարտեց Ատրպէյճանի յարձակումները Հայաստանի Տաւուշի Մարզի բնակավայրերուն վրայ։

Ընդդիմադիր «Նոր Դեմոկրատ» կուսակցութեան ղեկավարի տեղակալ Ալեքսանտր Պուլրիս յայտարարեց, որ Ատրպէյճան պէտք է անյապաղ դադրեցնէ իր յարձակումները Հայաստանի սահմանամերձ բնակավայրերուն վրայ։ Ան նշեց, որ զինուորական այս արարքը հրադադարի խախտում է եւ նոյնիսկ անհասկնալի՝ երբ պէտք է պայքարիլ համաճարակին յարուցած խնդիրներուն դէմ։

Գանատա–Հայաստան խորհրդարանական բարեկամութեան խմբակցութեան նախագահ Պրայըն Մէյ մտահոգութիւն յայտնեց զինուորական իրադարձութիւններուն դժով եւ հաստատեց Գանատայի նախանձախնդրութիւնը ԵԱՀԿ–ի Մինսկի խմբակի ճիգերուն աջակցելու։

Խորհրդարանի անդամ Հան Տօնկ գրեց, որ Հայ–Ատրպէյճանական սահմանի բռնութիւններուն արձագանգները կը հասնին մինչեւ իր ընտրտարածքը՝ Հիւսիսային Տօն Վալի, ուր կը գտնուի Թորոնթոյի Հայ Կեդրոնը։ Ան իր գրառումին կցած էր Գանատայի CTV հեռուստաընկերութեան հարցազրոյցը Հայաստանի արտաքին գործոց նախարար Ջօհրապ Մնացականեանի հետ։

Խորհրդարանի անդամ Ժան Եփի գրեց, որ խորապէս անհանգստացած է Հայ–Ատրպէյճանական սահմանին տեղի ունեցող բռնութիւններով եւ կոչ ուղղեց անյապաղ վերսկսիլ խաղաղ բանակցութիւնները։

Գանատայի խորհրդարանի անդամ Էմանուէլլա Լամպրոփուլոս Յուլիս 20 թուակիր յատուկ հաղորդագրութեամբ մը դատապարտեց Հայաստանի դէմ ատրպէյճանական սադրանքները։ Հաղորդագրութեան մէջ Լամպրոփուլոս կոչ կ’ուղղէ դադրեցնելու ուժի գործադրութիւնը եւ դատապարտելի ու անընդունելի կը գտնէ Մեծամօրի հիւլէակայանը հարուածելու Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան սպառնալիքները։

Արցախ–Գանատա խորհրդարանական բարեկամութեան խմբացկութեան նախագահ Ռէյչըլ Հարտըր դատապարտեց ատրպէյճանական յարձկառւմները։

«Հորիզոն»ի հետ կայացած հարցազրոյցի մը ընթացքին, նախարար Մելանի Ժոլի իր զօրակցութիւնը յայտնեց Գանատայի հայ համայնքին։

«Միշտ պատրաստ եմք մեր բոլոր հնարաւորութիւններն ու կարողականութիւնը ի սպաս դնել Հայրեւիքին ու հայութեան անվտանգութեան»

Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի Հանրապետութեան դէմ Ազրպէյճանի յարձակո՝ղապաշտ ու ռազմատենչ նկրտումներու հերթա՝կան փաստը արձանագրուեցաւ։ Այս պահուն թի՝րախը Հայաստանի Հանրապետութեան հիւսիսա՝րեւելեան սահմանի հատուածն է։ Ինչպէս նախորդ բոլոր պարագաներուն, այս անգամ ալ անոր կ'ու՝ղեկցի քարոզչական ապատեղեկատուութիւնը, Թուրքիոյ անմիջական աջակցութեամբ։

Առաջին իսկ պահէն Հ.Յ.Դ. աշխարհասփիւռ կառոյցը ձեռնարկեց իր բոլոր կարողութիւններով միջազգային հանրութեան ներկայացնելու՝ բա՝նակցութիւններու փոխարէն Հայաստանին Ֆիզի՝քական սպառնալիք ներկայացնող Ադրբեջանի քաղաքականութիւնը, անգամ մը եւս հաստատե՝լով որ ներխուժումն ու նախադարձակ կողմը չղա՝տապարտելը կը խրախուժէ Ազրպէյճանին եւ հող կը նախապատրաստէ լայնամասշտաբ ռազմական գործողութիւններու համար։

Այս դժուարին պահուն, Հայ Յեղափոխա՝կան Դաշնակցութիւնը իր աշխարհասփիւռ կա՝ռոյցով, Հայ Դատի Յանձնախումբերու եւ գրա՝սենակներու ցանցով, ուղեկից միութիւններով ու համակիրներով կանգնած է հայկական զոյգ պե՝տութեանց, հայկական բանակին կողքին։ Ինչպէս միշտ, մենք պատրաստ ենք մեր բոլոր հնարաւո՝րութիւններն ու կարողականութիւնը ի սպաս դնել Հայրենիքին ու հայութեան անվտանգութեան եւ զարգացումին։

Հ.Յ. Դաշնակցութեան Բիւրօ
14 Յուլիս 2020

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի յայտարարութիւն

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Կեդ՝րոնական կոմիտէն խստօրէն կը դատապարտէ Հայաստանի Հանրապետութեան պետական սահ՝մանը խախտելու եւ ռազմական ներթափանցումի փորձ կատարելու ատրպէյճանական բանակի յարձակապաշտ գործողութիւնները եւ այդ ծիրէն ներս հայկական բնակավայրերն ու խաղաղ բնակչութիւնը ատրպէյճանական հրետանիին թիրախ դարձնելու արարքները։

Պաքուի իշխանութիւններուն ռազմատենչ արձագանգներուն անքակտելիօրէն կապուած է հայատեացութեան քաղաքականութիւնը, որուն փաստերը կը հանդիսանան Մարաղայի ջարդն ու 2016–ի Ապրիլեան քառօրեայ պատերազմի ըն՝թացքին Թալիշի մէջ խաղաղ բնակիչներու սպան՝դը, իսկ Պաքուի յարձակողաղաշտ քաղաքակա՝նութեան անուրանալի զօրակիցը կը հանդիսանայ Անգարան, որ անցնող օրերուն դարձեալ հիմնա՝ւորեց իր այդ կեցուածքը։

Ի տե՛ս այս կացութեան, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէն զօրաշարժի ենթարկած է Հայ Դատի յանձնախումբերը, կոմիտէները, երի՝տասարդական եւ ուսանողական միութիւնները։

Գանատայի Հայ Դատի յանձնախումբը արդէն իսկ կապ հաստատած է Գանատայի պետա՝կան տարբեր գերատեսչութեանց հետ եւ զանոնք իրազեկ պահած կատարուող իրադարձութիւննե՝րուն մասին։

Մեր խորին վշտակցութիւնները կը յայտ՝նենք մեր նահատակ հերոսներու ընտանիքներուն եւ հարազատներուն։ Հայ Յեղափոխական Դաշ՝նակցութեան Գանատայի կառոյցը, այս հանգր՝ուանին վճռականօրէն կանգնած է Հայոց յաղ՝թական բանակին, զինուորներուն եւ սպայակազ՝մին կողքին՝ հայրենիքի պաշտպանութեան Սրբազան գործին ի խնդիր։

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Գա՝նատայի կառոյցը, Հայ ժողովուրդին սպառնացող ատրպէյճանական կամ որեւէ այլ թշնամական բռնարարքներուն ու ռոտնգութիւններուն դի՝մաց՝ միակամ պատրաստ է սատար ու վահան հանդիսանալու հայրենիքին։

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէ

«Դաշնակցութեան Եւ Անոր Համակիրներուն Համար Հայոց Բանակը Եւ Հայկական Պետականութիւնը Բացարձակ Արժէք Են» Յակոբ Տէր Խաչատուրեան

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչ, Հայ դատի Կեդրոնական խորհուրդի նախագահ Յակոբ Տէր Խաչատուրեան հարցազրոյց տուած է Հայաստանի Հանրային պատկերասփիւռի կայանի «Հարցազրոյց» հաղորդաշարին

Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան Ստորագրութեան Կայանի «Հարցազրոյց» հաղորդաշարին

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը անդրադարձած է յուլիս 12–ին հայ–ազրպէյճանական սահմանի Տաւուշի հատուածին մէջ իրավիճակի սրման եւ այդ գծով ՀՅԴ սփիւռքեան կառոյցներուն ու Հայ դատի գրասեն՝եակներուն ձեռնարկած քայլերուն։

Հայ–ազրպէյճանական սահմանին վրայ ազրպէյ՝ճանական յարձակումներուն լոյսին տակ աշխարհով մէկ կատարուած ցոյցերուն մասին խօսելով՝ ան ըսաւ. «Տաւուշեան դէպքերէն ետք Հայ յեղափոխական դաշ՝նակցութիւնը, բնականաբար, ձեռնարկեց անմիջական աշխատանքներու, առաջին հերթին՝ քարոզչական մարզին մէջ։ Մեր գրասենեակներն ու յանձնախումբերը անցան գրոհի՝ դիմադրաւելու համար Թուրքիոյ եւ Ազրպէյճանի հակահայ քարոզչական արշաւը, ինչ՝պէս նաեւ իրականութիւնը ներկայացնելու եւ օժան՝դակելու Հայաստանի արտաքին դիւանագիտութեան, մանաւանդ որ Ազրպէյճան չըջած էր դերերը եւ տեղե՝կութիւն կը տարածէին այն մասին, որ Հայաստան յարձակում գործած է Ազրպէյճանի վրայ»։

Ըստ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչին, առաջին մարզը քաղաքական–քարոզչական աշխատանքն էր, որ տեղի ունեցաւ աշխարհով մէկ եւ տուաւ իր ար՝դիւնքները թէ՛ Միացեալ Նահանգներու մէջ, թէ՛ Քա՝նատայի, թէ՛ Աւստրալիոյ, եւ թէ՛ Եւրոպայի մէջ, որով՝ հետեւ տարբեր երկիրներու մէջ Հայ դատի բարեկամ՝ներ ամուր նեցուկ կանգնեցան Հայաստանի՝ հաւաստ՝իացնելով, որ իւրաքանչիւր երկրի կառավարութեան մէջ աշխատանք պիտի տանին, որպէսզի տուեալ կա՝ռավարութիւնը հայանպաստ դիրքորոշում ունենայ, դատապարտէ Ազրպէյճանի յարձակողական մօտեցու՝մը, լաւապէս հասկնայ Թուրքիոյ միջամտութեան տա՝րողութիւնը եւ այդ ուղղութեամբ անհրաժեշտ քայլե՝րու դիմուի։

Ան դիտել տուաւ, որ երկրորդ մարզը ցուցականն էր եւ ՀՅԴ–ին ու անոր երիտասարդական–ուսանողա՝կան կառոյցներուն կողմէ կազմակերպուեցաւ՝ ունե՝նալով քանի մը նպատակ. առաջին՝ պաշտպանել հայ՝կական կառոյցները, որովհետեւ գիտէին, որ Ազրպէյ՝ճան եւ Թուրքիա համադրաբար դիմած են լուրջ աշ՝խատանքի՝ խանգարիչ միջոցառումներ կատարելու։

«Ուստի, առաջինը պաշտպանողական էր՝ Հա՝յաստանի ղեսպանատուներու, հայկական կեդրոննե՝րու, մշակութային կեդրոնները։ Իսկ երկրորդը ցոյցեր էին Ազրպէյճանի եւ Թուրքիոյ ղեսպանատուներուն ու հիւպատոսարաններուն առջեւ՝ անգամ մը եւս բողո՝քելու աշխարհին, որ Ազրպէյճան չէ հրաժարած ամէն ինչ բռնի ուժով լուծելու քաղաքականութիւնէն, ինչ որ ուղղակիօրէն կը հակառէ ԵԱՀԿ Մինսքի համանախա՝զահներուն մօտեցումներուն՝ հարցը խաղաղութեան ճամբով լուծելու։ Այս ցոյցերը նաեւ կը միտին քողա՝զերծել Թուրքիան, որ ո՛չ միայն կ'օժանդակէ Ազրպէյ՝ճանին, այլ այս անգամ նաեւ անցած է սպառնալիքի՝ Հայաստանի դէմ», նշեց ան։

Յակոբ Տէր Խաչատուրեան դիտել տուաւ, որ ՀՅԴ–ին աշխատանքային երրորդ ոլորտը հայկական օժանդակութեան ծրագիրներն են՝ ուղղուած բանակին, սահմանամերձ գիւղերու վերականգնման։

Պատասխանելով հարցումի մը՝ ցոյցերուն ըն՝թացքին ազրպէյճանցիներուն հետ բախումներու վե՝րաբերող՝ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը շեշտեց, որ ՀՅԴ–ի շարքայիներուն եւ համակիրներուն յստակ ցուցմունք կը տրուի խաղաղութեամբ ցոյցեր կատարե՝լու՝ օրէնքին, իրաւունքի եւ տուեալ երկիրներու կա՝նոններուն համապատասխան, բայց եւ այնպէս բա՝խումներ արձանագրուած են այն պարագային, երբ ցոյցի վայր գտնուող ազրպէյճանցիներ իրենք խախ՝տած են օրէնքը, կարգ ու կանոնը, դիմած են յարձա՝կողական քայլերու՝ ուղեկով խանգարել ցոյցերուն նկարագիրը։ Ըստ անոր՝ կարգ մը տեղերու մէջ հայ երիտասարդները հակադարձած են, իսկ այլ վայրերու մէջ ոստիկանութիւնը միջամտած է եւ խաղաղութիւնը վերականգնած։

«Հարցազրոյց» հաղորդաշարը վարողը նաեւ հարցում ուղղեց աշխարհի տարբեր մայրաքաղաքներու

մէջ ՀՅԴ–ին կողմէ տուեալ երկիրներու խորհրդարաննե՝րուն հետ գործակցութեան եւ արձանագրուած յաջողու՝թիւններուն։ Յակոբ Տէր Խաչատուրեան ըսաւ, որ 13 Յուլիսին այս գծով արդէն իսկ աշխատանք սկսած էր, արձանագրուած են յաջողութիւններ, բայց եւ այնպէս պէտք է ըսել, որ Թուրքիա եւ Ազրպէյճան եւս իրենց կարգին աշխատանք կը տանին՝ օգտագործելով ՕԹԱՆ–ի քարտը, կարգ մը երկիրներու մէջ հակառուսական տրամադրութիւնները, որոնց նաեւ կը փորձեն կապել Հայաստանի ճակատագիրը։ Ան նշեց նաեւ, որ չարք մը յաջողութիւններու կարելի եղած է հասնիլ, սակայն պէտք է մոռնալ, որ ազրպէյճանցիները ունին նաեւ նիւթական հսկայական միջոցներ, որոնց օգտագործումով կրնան յաջողութիւններ արձանագրել։ ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը շեշտեց, որ, թէեւ բաւական աշխատանք տարուած է Դաշնակցութեան եւ Հայ դատի գրասենեակ՝ներուն ճամբով, բայց եւ այնպէս միշտ ալ աւելին ընե՝լու մարտահրաւէրը առկայ է, ուստի պէտք է շարունակել եւ նոր ծրագիրներ մշակել։

Հաղորդավարը հարցուց, թէ ի՞նչ են սփիւռքի տպաւորութիւնները Տաւուշի սահմանին վրայ տեղի ու՝նեցած իրադարձութիւններուն մասին։

«Նախ ըսեմ, որ սփիւռքի մէջ չկայ հայ մը, որ չու՝րախանայ մեր բանակին ձեռք ձգած արգիւնքով, իսկ իւրաքանչիւր կորուստ մեծ ցաւ է ու խոր վիշտ կը պատ՝ճառէ, այս առիթով ալ ցաւակցութիւններ կը յայտնենք նահատակներուն ծնողներուն, զինակիցներուն եւ հա՝մայն հայութեան։ Բայց գիտենք նաեւ, որ անոնք ան՝մահացան հայրենիքի պաշտպանութեան ճամբուն վրայ։ Այդ ազգային հպարտութիւնը նաեւ ներշնչման աղբիւր է սփիւռքի պարագային, եւ ուրախ ենք ըսելու, որ անոր անդրադարձները մենք կը տեսնենք թէ՛ ներազգային իմաստով, եւ թէ՛ արտաքին գետնի վրայ։ Ներքին իմաս՝տով աւելի գօտեպնդուած կ'աշխատին մեր կառոյցները՝ ըլլան անոնք Հայ դատի, երիտասարդական–ուսանողա՝կան կամ ուղեկից կազմակերպութիւններ, իսկ արտաքին իմաստով իւրաքանչիւր գոհի դիմաց մենք քարոզչական հսկայական մեքենայ կը լարենք, օտարներն ալ կը ձայ՝նակցին մեզի եւ անընդունելի կը գտնեն այս տեսակի յարձակողական քաղաքականութիւնը, որ մարդկային կեանքեր կը խլէ եւ ոչ մէկ ձեւով կը նպաստէ հարցի լուծման կամ խաղաղութեան հաստատման», շեշտեց Յ. Տէր Խաչատուրեան։

Մեր բանակին յաջողութիւններով սփիւռքի մէջ տիրող խանդավառութեան եւ ոգեւորութեան մասին հարցումի մը պատասխանելով՝ Յակոբ Տէր Խաչատուրե՝եան շեշտեց, որ շատ մեծ է այդ խանդավառութիւնն ու հպարտութիւնը։ Ան շեշտեց, որ բանակին նկատմամբ այս զգացումները միշտ ալ եղած են. «Հայ յեղափոխա՝կան դաշնակցութեան եւ մեր համակիրներուն համար հայկական բանակը, Հայաստանի պետականութիւնը բացարձակ արժէքներ են, որոնց շուրջ պէտք է հա՝մախմբուի մեր ժողովուրդը։ Այս գծով՝ ոչ մէկ կասկած կամ տարակարծութիւն։ Ուրախ ենք, որ հայկական բա՝նակը կը գտնուի իր բարձրութեան վրայ, իսկ մենք ամէն ճիգ ու ջանք ի գործ պէտք է դնենք, որպէսզի անոր բա՝զուկը զօրանայ եւ արգիւնաւէտութիւնը աւելնայ», հաստատեց ան։

Վերջին հարցումը կը վերաբերէր այն երեւոյթին, որ արդեօք Հայաստան որքանո՞վ կ'օգնէ սփիւռքին։ «Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչները բոլոր երկիրներուն մէջ ալ կ'աշխատին այս ուղղու՝թեամբ, բայց երբ գան խաղաղ օրերը, եւ հանգամանօ՝րէն քննարկուի այն, որ Հայաստան ի՞նչ կրնայ ընել սփիւռքին, այն ատեն կարելի է ըսել, որ հոն կան շատ մը ոլորտներ, որոնց համար Հայաստան յաւելեալ աշխա՝տանք պէտք է տանի սփիւռքին համար, ինչպէս նաեւ պէտք է վերացուին այն բոլոր արհեստական արգելքնե՝րը, որոնք դրուած են սփիւռքահայերու, քաղաքացինե՝րու նկատմամբ, որպէսզի անոնք կարենան Հայաստանի ընկերային, քաղաքական կեանքին իրենց լիիրաւ մաա՝նակցութիւնը բերել», եզրափակեց Յակոբ Տէր Խաչա՝տուրեան։

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

ԱՌԱՋՆՈՐԴԻ ԽՕՍՔ



ՈՒՍՈՒՑՈՒՄ ԶՇՄԱՐԻՏ ՀԱԻԱՏՔԻ

Պօղոս առաքեալ իր անմիջական գործակիցին՝ Տիտոսին ուղղած առաջին նամակին յատկապէս 2-րդ գլխուն մէջ կը յորդորէ հաւատացեալները և քրիստոնէական գիտակից վարք և հաւատքի առողջ ուսուցում կը պահանջէ։ Ան իր խօսքը հիմնական չորս հասցէներու կ'ուղղէ.-

ա) Տարեցներուն, այսինքն՝ հասուն մարդոց, անոնք որոնք կեանքի փորձառութիւնը ունին և օրինակ կրնան դառնալ իրենց նմաններուն, որպէսզի անոնք հաւատքի ճշմարիտ կեանքի ճանապարհէն չշեղին և յատկապէս Աստուծորդիին՝ մեր Փրկչին բացած լուսաւոր ճանապարհէն քալեն։ Տարեցները անոնք են, որոնք գիտակցութիւնը ունին ճշմարտութեան՝ ըլլալու **ԶԳԱՍՏ**, աւելի **ՊԱՐԿԵՇՏ** և **ԶՈՒՍՊ**. բառեր, որոնք իսկական ու ճշմարիտ նկարագիրը կը կերտեն մարդուն մէջ. մարդը՝ բառին լայն ու ամբողջական իմաստով։

Այսօր աշխարհը այնքան փոխուած է, որ մարդը տարօրինակ ձևով և դիրքին կերպով կը տարուի, կը շեղի իր իսկական կոչումէն և կը դառնայ անպարկեշտ, անզուսպ, որկրամոլ ու մանաւանդ փառամոլ։ Այո՛, այսօր կը տեսնենք, որ մարդիկ իրար նկատմամբ աւելի ռիսակալ կը դառնան յաճախ, թշնամանքով կը վերաբերին և խաբեայութեամբ ու շահամոլութեամբ կը մօտենան իրարու։ Մարդիկ երբեմն *«փառք ու պատիւ»* շլացած կը դառնան աթոռամոլներ՝ իրենք զիրենք գերադաս յամարելով։

Առաքեալը տարեցներուն կը թելադրէ տիպար օրինակ հանդիսանալ ո՛չ թէ չարին, չարութեան և անպարկեշտութեան, այլ՝ հաւատքի, սիրոյ, համբերութեան և մանաւանդ՝

ժովկալութեան։ Այսպիսի նկարագրային գիծերով ու առաքինութիւններով լեցուն մարդն է որ կ'ապրի աւելի խաղաղ և երջանիկ կեանք։ Այո՛, այն ատեն է որ աշխարհը կը խաղաղի և մարդիկ կ'ապրին աւելի սիրով ու ժովկալ։

բ) Չափահաս կանանց՝ ըլլալու **ԶԳԱՍՏ**, **ՄԱՔՐԱ-ԿԵՆՑԱՂ** և **ԲԱՐԵԽՐԱՏ**։ Նման նկարագրային գիծերով ինքզինք դրսևորեց ու մանաւանդ իր կեանքի օրինակով ներշնչման աղբիւր հանդիսացաւ **Տիրամայրը՝ Ս. Կոյս Մարիամը, Ս. Աստուածածինը, Աստուածամայրը**։ Ան եղաւ օրինեալը բոլոր կանանց մէջ՝ իր անարատութեամբ, սրբութեամբ և բարեխրատ խօսքերով։ Դարձաւ տիպարը մայրութեան և իր օրինակով սորվեցուց, ինչպէս առաքեալը կը թելադրէ, որ հասուն կանայք օրինակ հանդիսանան մանկահասակ կանանց՝ ըլլալու **ՀԱՄԵՍ, ԱՆԲԻԾ, ԱՆԱՐԱՏ, ՏՆԱՇԷՆ և ԲԱՐԻ**։ Այսպիսի կանայք կը դառնան իսկական սիւները իրենց ընտանիքին և գիտակից ու ճշմարիտ մայրերը իրենց սիրասուն զաւակներուն։

գ) Երիտասարդներուն՝ ըլլալու **ԶՈՒՍՊ**։ Յատկապէս կը թելադրէ իր անձով բարի գործերու օրինակ ըլլալ և իր ճշմարիտ ուսուցումներով օրինակը տալ **ԶԳԱՍՏՈՒԹԵԱՆ, ԱՆԿԵՂԾՈՒԹԵԱՆ, ՄԱՔՈՒՐՈՒԹԵԱՆ և ՊԱՐԿԵՇՏՈՒԹԵԱՆ**։ Այս պատգամը այսօր որևիցէ ժամանակէ աւելի այժմեական է և բնականաբար պէտք է ուղղել երիտասարդութեան. այն երիտասարդութեան, որ երբեմն շեղումներու մէջ է, կը մոլորի իր իսկական ճանապարհէն, փորձութիւններու կ'ենթարկուի և չարը կը սկսի տիրապետել անոնց բոլոր արարքներուն և յատկապէս կեանքին։

Այսօր, որքան ազգեր ու ժողովուրդներ պէտք ունին պարկեշտ, զգաստ ու բարոյապէս մաքուր երիտասարդներու՝ առողջ ըլլալու, ապահով զգալու, ազգի ապագան ամուր հիմերու վրայ դնելու և վաղուան գիտակից սերունդները ապահովելու համար։

դ) Ծառաներուն՝ ըլլալու **ՀՆԱԶԱՆԴ և ՀԱԻԱՏԱՐԻՄ** իրենց տէրերուն, ամէն ձևով գոհ պահելու զանոնք։ Անկասկած մենք բոլորս ծառաներն ենք Աստուծոյ։ Բնական կերպով պէտք է գոհունակ պահենք զԱստուած մեր արարքներով ու վերաբերմունքով։ Եթէ հաւատարմօրէն կը գործադրենք աստուածային պատուիրաններն ու հրահանգները, այն ատեն կը դառնանք իսկական ծառաները և յոյսի որդիները, ու մանաւանդ՝ արժանի ծառանգելու յաւիտենական կեանքը։

Հետևաբար, մենք ևս այսօր և ընդմիշտ հետամուտ ըլլանք ճշմարիտ հաւատքի ուսմամբ զինուելու և հարստանալու, մանաւանդ ըլլալու **ԶՈՒՍՊ, ԶԳԱՍՏ, ՊԱՐԿԵՇՏ, ՄԱՔՐԱԿԵՆՑԱՂ ու ՀԱԻԱՏԱՐԻՄ** մեր իսկական կոչումին և քրիստոնէական վարքին մէջ։

ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ



ՈՒՍԱՌՈՐԻՉ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ



Վերափոխումը Ս. Կոյս Մարիամ Աստուածածնայ երկրէն երկինք փոխադրուելու յիշատակն է:

Վերափոխումը Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ հինգ տաղաւար տօներէն չորրորդն է, որ կը հանդիպի Օգոստոս 15-ի մերձակայ Կիրակին:

Այս տօնը Ս. Աստուածածնի նուիրում տօներէն գլխաւորն է ու հնագոյնը:

Համաձայն եկեղեցական աղբիւրներու, մեր Տիրոջ և Փրկչին Յիսուս Քրիստոսի խաչելութենէն ետք, Ս. Կոյս Աստուածածին 15 տարի ապրեցաւ Երուսաղէմի մէջ, Յովհաննէս Առաքելի խնամքի տակ. անոր երեցաւ Տիրոջ հրեշտակը և հաղորդեց մարմնով երկինք փոխադրուելու աւետիսը:

Այդ գիշեր, Տիրամայրը աւանդեց իր հոգին. առաքելները անոր մարմինը մեծ հանդիսութեամբ ամփոփեցին Գերսեմանիի ձորակին մէջ: Յուդարկաւորութեան ներկայ չէր Ս. Բարթողիմէոս առաքելը: Աւելի ուշ հասնելով, Ս. Բարթողիմէոս խնդրեց բանալ շիրիմը, որպէսզի վերջին անգամ տեսնէ Տիրամայրը: Երբ բացին գերեզմանը, զայն պարապ գտան և հասկցան, որ ան փոխադրուած է երկինք՝ իր Միածին Որդիին քով:

Աւանդութեան համաձայն, Ս. Բարթողիմէոս առաքելին տրուեցաւ Աստուածամօր կենդանապատկերը, զոր Ս. Կոյսը յետ օրհնութեան յանձնած էր Յովհաննէս աւետարանիչին:

Հայկական գրոյցներու համաձայն, Ս. Բարթողիմէոս առաքելը զայն Հայաստան բերաւ և զետեղեց Անձնացեաց գաւառի Դարբնաց քար կոչուած տեղը:

Սուրբ Աստուածածնայ Վերափոխման տօնին կը կատարուի խաղողօրհնէք, որուն ընթացքին կը կարդացուի Ս. Ներսէս Շնորհալիի աղօթքը և կը խնդրուի Աստուծոյ օրհնութիւնը: Խաղողը իբրև տարուան առաջին բերք՝ կը խորհրդանշէ ամբողջ տարուան բերքը:

ՇԱՐԱԿԱՆ

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ

ՕՐՀ. ԴՁ

Այսօր տեսան Սուրբ Կոյսին օդին մէջ թռչիլը և ամպեղէն կառքով երկինք համբարնալը և երկնային խորաններու մէջ մտնելը իմաստուն կոյսերուն հետ. և անոնք միաձայն կ'ըսէին՝ օրհնեալ ես դուն՝ կիներուն մէջ ամէնօրինեալ:

Այսօր բազմաչեայ քերովքներուն և վեցթևեան սերովքներուն հետ եօթնաստեղեան խորանները մտնելով տեսար զանազան աթոռներ, զոր Տէրը քեզի համար պատրաստած է. մենք ալ կ'երգենք ըսելով՝ օրհնեալ ես դուն՝ կիներու մէջ ամէնօրինեալ:

Այսօր Աստուած Բանը, նախամայրը մեղքէն ազատող Կոյս Մայրը երկինք փոխադրեց, աստուածային խորաններուն անպատմելի կեանքին մէջ դասելով զայն. ուստի Սուրբ Եկեղեցին հրճուողական ձայնով նոր օրհնաբանութիւն կ'երգէ քեզի:

Այսօր Տիրամայր Սրբուհի Կոյսը, հրեշտակներու դասերուն միջոցաւ աւանդեց իր սուրբ հոգին, գերարփիի նըման փայլելով և ահեղ հրեղէններու դասերուն նմանելով. ուստի Սուրբ Եկեղեցին հրճուողական ձայնով նոր օրհնաբանութիւն կ'երգէ քեզի:

Այսօր անմարմին հրեշտակները Աստուածամայր Կոյսին մաքուր մարմինը վեր բարձրացնելով ամփոփեցին տեսանելի զգայութիւններէն գերակայ եղողներուն տեղը՝ անճառելիներուն հաղորդակից ընելով զայն. ուստի Սուրբ Եկեղեցին հրճուողական ձայնով նոր օրհնաբանութիւն կ'երգէ քեզի:



Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի 90-Ամեակ



«Դպրեվանքը սուրբ վայր մըն է, ուր յանձնառու և տեսական ունեցող սպասաւորներ կը պատրաստուին մեր եկեղեցոյ ու ժողովուրդի ծառայութեան համար:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը վճռական դերակատարութիւն ունի մեր ժողովուրդի պատմութեան այս կարևոր ժամանակամիջոցին ընթացքին, երբ մեր ժողովուրդին կարիքներն ու սպասումները այնքան բազմաթիւ ու այլազան են, թէ Հայրենիքի և թէ Սփիւռքի մէջ»:

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքը կարևոր ներդրում ունի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ծառայական կեանքին ու առաքելութեան բոլոր մարզերէն ներս:

Դպրեվանքէն շրջանաւարտ հարիւրաւոր եկեղեցականներ և աշխարհականներ աշխուժօրէն լծուած են մեր եկեղեցոյ ու մշակոյթի ծառայութեան, թէ Հայաստանի և թէ Սփիւռքի մէջ: Անոնց գործունէութիւնը ինքնին պերճախօս վկայութիւնն է այն առաքելութեան, որուն լծուած է Դպրեվանքը մեր ժողովուրդի կեանքէն ներս:

Դպրեվանքի պատմութիւնը անբաժանելի մասն է մեր ժողովուրդի տարագրութեան պատմութեան:

1915-ի հայ ժողովուրդի ցեղասպանութեան ընթացքին, Կիլիկիոյ Սուրբ Աթոռը ևս վտարանդի ու աստանդական դարձաւ, իր դարաւոր հայրենիքէն: 1930 թուականին, Կաթողիկոսութիւնը վերջնականապէս հաստատուեցաւ Անթիլիաս, Լիբանան: Նոյն տարին, Սահակ Բ. Կաթողիկոս հիմը դրաւ Դպրեվանքին, որ արդարօրէն կը նկատուի Սուրբ Աթոռին «սիրտ»ը և «ողնայար»ը:

Դպրեվանքը կարևոր ներդրում ունեցաւ հայ եկեղեցոյ ծառայական և ուսումնական առաքելութեան, ինչպէս նաև հոգևոր վերազարթօնքին մէջ:

Հազարաւոր դպրեվանեցիներ իրենց հոգեմտաւոր կազմաւորումը ստացան Դպրեվանքէն ներս:

Դպրեվանքը պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ քայլ պահեց նոր մարտահրաւերներուն, ժամանակի պահանջներուն և հայ ժողովուրդի աճող կարիքներուն հետ:

Այսօր ևս, աշխարհի տարբեր անկիւններուն մէջ,

հոգևոր և ուսումնական ծով կարիքներ ունինք: Մենք անմիջական կարիքը ունինք եպիսկոպոսներու, կուսակրօն թէ ամուսնացեալ եկեղեցականներու, սարկաւագներու, ինչպէս նաև կրօնի և հայերէն լեզուի ուսուցիչներու: Միայն նուիրեալ և լաւ պատրաստուած ծառայողներ կրնան պատասխանատուութեան գիտակցութեամբ մեր ժողովուրդին դասաւանդել և քարոզել մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աւետարանը: Հետևաբար, Դպրեվանքը կոչուած է կարևոր դեր ունենալու հայ եկեղեցոյ կեանքին ու վկայութեան մէջ:

Այս տեսլականով ու հեռանկարով, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս յատուկ կարևորութիւն կ'ընծայէ Դպրեվանքի կարիքներուն և անոր բարգաւաճման: Ան ուժգնօրէն կը հաստատէ, թէ Դպրեվանքը առաջնահերթ կը մնայ իրեն համար, և թէ ճիգ պիտի չխնայէ ու իր կարելին ընէ, որ Դպրեվանքը նոր կենսունակութիւն ստանայ և արդիւնալից գործունէութիւն ունենայ:

ԴՊՐԵՎԱՆՔԻ ՔԱՅԼԵՐԳ

Խօսք՝ Թորգոմ Արք. Գուշակեան

Սիրտ ի սիրտ և ձեռն ի ձեռն
Բարձած խաչն ուխտից մեր բեռն,
Ընթանանք յառաջ, եղբարք.
Նահանջելն է գործ անարգ,
Վազենք հոգով ակընդէտ,
Նպատակի մեր ի կէտ:

Կրօնի հուրն և ազգի սէրն
Զուգեակ իղձեր սերտ և սեռն,
Ներշնչումին մեր հոգւոց.
Թող լինի, ո՛հ, անբիծ բոց,
Երկուքն ի մի անբաժան,
Մեր սրտերուն, սրբարան:

Մայր մեր դու նուիրական,
Եկեղեցիդ հայկական,
Ընդունէ՛ մեր սրտից գոհ.
Զոր քեզ բերենք հոգով գոհ,
Դպրեվանուց այս յարկիս,
Ուխտանուէր մեք որդիքս:



ՌԻՍԱԲՈՐԻՉ



«ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ»

Գանատայի Հայոց Թեմի Ազգային Առաջնորդարանի
Կրօնական Յայտագիր

Իրաքանչիւր ամիս հետեւեցէք մեր յայտագիրին
ընկերային ցանցերու եւ youtube -ի մեր էջերուն միջոցաւ



Armenian Prelacy of Canada

ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԱՆ

Այս դրուագը Յիսուսի 5 հաց և 2 ձուկով 5000 մարդ կերակրելու պատմութիւնն է
Գծագրիչը դիտումնաւոր շատ մը սխալներ կատարած է

Քանի՞ սխալ կրնաս գտնել

Ամբողջ պատմութիւնը գիտնալու համար կարդա՛ Յովհաննու 6. 1-15 համարները



Ազգային Առաջնորդարան
Armenian Prelacy of Canada
Prelature Armenienne du Canada



514-856-1200



prelacy@armenianprelacy.ca



www.armenianprelacy.ca



Խմբագիր՝ Քրիստափոր Միքայէլեան



3401 Olivar Asselin
Montreal, Quebec H4J 1L5

Vancouver Armenians unite to confront Azerbaijani demonstrators

VANCOUVER—Around 100 Vancouver Armenian community members showed up in downtown Vancouver on July 25 to confront a smaller number of Azerbaijanis who came out chanting anti-Armenian slogans and holding posters.

Armenian community members were joined by St. Gregory Armenian Apostolic Church pastor Very Rev. Karekin Shekherdeman and St. Vartan Armenian Apostolic church priest Rev. Father Keghart Garabedian. The standoff in the heart of downtown in front of the Vancouver Art Gallery started off with singing of the Armenian National anthem followed by speeches and Armenian shoorjbar and lasted over two hours.

Armenian National Committee of Canada (ANCC) Western Region representatives Hagop Agopian and Palig Kochkarian read speeches condemning Azerbaijan’s recent attack against Davush province

and called on the dictatorship in Baku to stop its continued aggression against Armenia and Artsakh. All the while, the Armenian protesters were chanting “Armenia wants peace, Azerbaijan wants war”, “Artsakh belongs to Armenia” and other pro-peace and anti hate slogans.

Meanwhile, around 50 counter protesters holding up Azerbaijani and Turkish flags kept shouting “Karabagh belongs to Azerbaijan”, “Azerbaijan”.

The demonstration wrapped up with Hayr Karekin Shkherdeman leading the protesters in Lord’s Prayer and the singing of “Giligia.”

The July 25 demonstration was the culmination of one week of worldwide actions, on of the first of the series being the July 17 demonstration in Ottawa, in front of the Azerbaijan embassy, that was organized by the Armenian Youth Federation and the Armen-Karo student association.

Azerbaijan, Turkey hold ‘large-scale’ military exercises

BAKU—Two weeks after launching a brazen attack on civilian and military targets in Armenia’s Tavush Province, Baku announced on July 27 that Azerbaijan and Turkey will hold “large scale” joint military exercises beginning on July 29.

“Azerbaijani-Turkish Live Fire Joint Large-Scale Tactical and Flight-Tactical Exercises will be held in our country with the participation of the Land Forces and the Air Force of both countries,” an official statement by Azerbaijan’s defence ministry said.

The ministry also stressed that the joint exercises will involve military personnel, armored vehicles, artillery mounts and mortars, as well as military aviation and air defence equipment of Turkish and Azerbaijani armies.

“According to the plan, exercises involving the Land Forces will be held from Aug. 1 to 5 in Baku and Nakhchivan, and exercises with the participation of military aviation will be held from July 29 to Aug. 10 in Baku, Nakhchivan, Ganja, Kurdamir and Yevlakh,” the statement specified.

Official Ankara was quick to blame Armenia for the July 12 border clashes and reaffirmed its full support for Azerbaijan, with the Turkish foreign ministry saying, “Turkey will continue, with all its capacity, to stand by Azerbaijan in its struggle to protect its territorial integrity.”

Soon after Azerbaijan’s attack on Tavush Province, a high-level Azerbaijani army delegation went to Ankara for talks with Turkey’s military and defence

industry officials. During those talks, Turkey’s Defence Minister Hulusi Akar said that Armenians “will certainly pay for what they have done.” Ankara also expressed readiness to supply Turkish-made weapons to Azerbaijan. The Azerbaijani delegation to Ankara included Deputy Defence Minister Ramiz Tahirov and Kerem Mustafayev, the army chief of Nakhchivan. As Ankara was offering more weapons to Azerbaijan, official Baku threatened to bomb Armenia’s Metsamor Nuclear Power Plant.

Yerevan was quick to condemn Ankara’s response saying that Turkey was justifying the use of force on the Armenia-Azerbaijani border. Armenia’s Foreign Ministry stressed that Ankara has no place in the conflict settlement process and should stay true the provisions of its membership in the OSCE Minsk Group.

The announcement of the military drill comes two days after the OSCE Minsk Group Co-Chairs issued an announcement calling for military de-escalation and urging the sides to refrain from military threats.

However, Azerbaijan’s President Ilham Aliyev has lambasted the Minsk Group Co-Chairs by calling their efforts “meaningless” and threatening to end the Karabagh conflict settlement talks.

For his part, Russia’s Foreign Minister Sergey Lavorv urged his Turkish counterpart Mevlut Cavusoglu last week to exercise restraint in Ankara’s statements regarding the tensions on the Armenia-Azerbaijan border.

Canadian lawmakers condemn Azerbaijan’s aggression against Armenia

OTTAWA — In light of Azerbaijan’s recent aggression against the Republic of Armenia, federal, provincial and municipal lawmakers from across the political spectrum, responding to the calls made by the Armenian National Committee of Canada (ANCC), issued statements of condemnation and shared their concern regarding the ongoing escalation of tensions in the region.

On July 15, Canada’s Minister of Foreign Affairs, the Hon. François-Philippe Champagne issued a statement stating that Canada was concerned about the violence on the Armenian-Azerbaijani border and called for an immediate ceasefire.

In his statement, Minister Champagne added, “A resolution to this conflict must take into account the Helsinki Final Act, in particular the principles of non-use of force, territorial integrity and self-determination.”

The ANCC reacted to the Minister’s statement, stating “While we appreciate Minister Champagne’s call for immediate ceasefire and de-escalation, we urge the Minister to properly address the situation by forcefully condemning Azerbaijan’s blatant aggression and crimes against Armenia. Failing to distinguish will further empower dictatorial Azerbaijan to continue its bellicose actions and threaten peace and stability in the region.”

During the following days, Members of Parliament from the Liberal Party of Canada, the Conservative Party of Canada and the New Democratic Party of Canada issued statements condemning Azerbaijan’s blatant aggression and voiced their strong support for Armenia’s sovereignty and territorial integrity.

The Leader of the Official Opposition and the Conservative Party of Canada, the Hon. Andrew Scheer issued a very strong and principled statement in a letter sent to the ANCC.

In his letter, Mr. Scheer said “Canada’s Conservatives condemn in the strongest possible terms Azerbaijan’s recent escalation of violence along the Armenia-Azerbaijan border. We urge restraint and adherence to the ceasefire in the

hope that further escalation may be avoided. We also support the views of the Co-Chairs of the OSCE Minsk group that there can be no military solution to this conflict.”

Mr. Scheer went on to express his party’s unequivocal support for the self-determination of the Republic of Artsakh and called on the Canadian government to uphold that fundamental freedom for the people of Artsakh. He also shared his concerns regarding Canadian arms sales to Azerbaijan and called for the peaceful resolution of the conflict within the OSCE framework.

A powerful statement of condemnation was made by Liberal MP Faycal El-Khoury of Laval-les-Iles, during a parliamentary session on July 21. In his statement, MP El-Khoury condemned Azerbaijan’s aggression and said “Azerbaijan ignored UN calls for a ceasefire during the pandemic, backed by Turkey; threatened to bomb a nuclear power plant in Armenia; destroyed a PPE factory that was producing essential equipment for the Armenian fight against the COVID-19 pandemic; and intentionally targeted innocent civilians.”

MP El-Khoury added that we must remain vigilant and condemn all acts of aggression, especially during these difficult times for the global community.

In a letter addressed to the Minister of Foreign Affairs, Conservative MP Rachael Harder (Chair of the Canada-Artsakh Parliamentary Friendship Group), strongly condemned Azerbaijan’s recent attempts to violate the delicate ceasefire into a full-scale war and its threats to cause large civilian casualties. MP Harder urged the government to immediately condemn Azerbaijan’s aggression, based on the principle of non-use of force, enshrined in the Helsinki Final Act.

In a tweet published on July 17, Deputy Leader of the NDP, MP Alexandre Boulerice said, “Azerbaijan must stop immediately it’s aggression on Armenia and specially the vil-

Continued on page E2

Yerevan blames Baku for instigating anti-Armenian violence around the World

YEREVAN—Since Azerbaijan suffered massive losses on the battlefield when its forces brazenly began attacking military and civilian targets in Armenia’s Tavush region beginning on July 12, the number of violent attacks against Armenians and Armenian establishments around the world have increased. On July 24, Armenia’s Foreign Ministry directly

blamed official Baku for inciting—and sanctioning—hatred and violence toward Armenians around the world.

It began with Azerbaijanis living in Moscow stomping on apricots from Armenia and displaying discriminatory signs blocking sale of products to Armenians to beating up an Armenian man in Moscow.

Armenian-owned cafes were set ablaze in Kyiv, the capital of Ukraine. The vehicle belonging to Armenia’s Ambassador to Germany was set on fire in front of the Embassy in Berlin. Peaceful Armenian protesters were attacked or berated in London, Washington and Los Angeles.

Continued on page E2

European lawmakers urge Azerbaijan to install OSCE investigative mechanisms

BRUSSELS—European Parliament member Costas Mavrides initiated a letter, which was signed by 29 other members of the European Parliament from seven political groups, addressed to EU High Representative/Vice-President of the European Commission Joseph Borrell calling on the EU to urge Azerbaijan to put in place genuine confidence-building measure on the border, reported the European Armenian Federation for Justice and Democracy.

Specifically, the European lawmakers called for the EU to use it influence to urge official Baku to install investigative mechanism to monitor ceasefire violations that the OSCE called for after the 2016 April War.

On July 22, Borrell mediated a discussion between Armenian and Azerbaijani foreign ministers Zohrab Mnatsakanyan and

Jeyhun Bayramov, who replaced Azerbaijan’s long-time Foreign Minister Elmar Mammadyarov last week.

“I urged both sides to reaffirm their commitment to a ceasefire and undertake immediate measures to prevent further escalation,” Borrell said in a Twitter post after the phone call.

According to an official statement from the EU on the phone call, Borrell told the parties to \ “refrain from action and rhetoric that provoke tension, in particular from any further threats to critical infrastructure in the region.”

“He also stressed the need for meaningful re-engagement in substantive negotiations on the key aspects of the Nagorno-Karabagh conflict settlement under the auspices of the [OSCE Minsk Group] Co-Chairs; both ministers concurred on this,”

read the EU statement.

Reportedly Bayramov said that Baku was looking for “concrete results” from future talks with Armenia on the Karabagh conflict settlement, adding that Azerbaijan remained committed to a peaceful solution to the issue. Azerbaijan’s President Ilham Aliyev has called the OSCE mediation efforts “meaningless” and questioned its calls to refrain from a military solution to the conflict.

According to the Armenia’s Foreign Ministry, Mnatsakanyan “emphasized the importance of implementation of the previous agreements on reducing tensions, restoring and strengthening the ceasefire.”

The said confidence-building elements are precisely what the Members of the European Parliament referenced in their letter to Borrell.

lages of the Tavush province putting civilians at risk. It’s a violation of the ceasefire and even more incomprehensible when we have to fight a pandemic.” Mr. Boulerice’s tweet was shared by MP Don Davies of Vancouver-Kingsway.

In a public statement issued the same day, MP Bryan May of Cambridge and Chair of the Canada-Armenia Parliamentary Friendship Group, along with Friendship group members, MP Han Dong of Don Valley North and MP Jean Yip of Scarborough-Agincourt expressed their deep concern regarding the escalation of tensions on the Armenian-Azerbaijani border and shared CTV News’ interview with Armenia’s Minister of Foreign Affairs, Mr. Zohrab Mnatsakanyan that was aired earlier that day. A statement condemning Azerbaijan’s threat to bomb Armenia’s Nuclear Power Plant was followed by MP Emmanuella Lambropoulos of Saint-Laurent. In her statement MP Lambropoulos said “Threats made by the Azerbaijan Ministry of Defence warning Armenia that their missile systems can hit their nuclear power plant, the Metsamor NPP, with great accuracy, threatens the lives of thousands of innocent civilians, and it is simply unacceptable and uncalled for.”

Conservative Leadership Candidate, MP Erin O’Toole and Conservative MP Bob Saroya also delivered strong statements of condemnation. Mr. O’Toole condemned the attacks by Azerbaijan and said “I stand

with the Armenian people in light of the recent violence, grieve for the loss of their fallen soldiers, and call for an immediate ceasefire.” Mr. O’Toole’s statement was shared by Conservative Senator Leo Housakos of Quebec. Meanwhile, MP Bob Saroya of Markham Unionville tweeted “I strongly condemn the aggression by Azerbaijan for attacking Armenian villages, including a PPE factory in the northeastern Tavush Province of Armenia. This type of repeated aggression by Azerbaijan during this global pandemic is unconscionable.”

Responding to the calls made by local ANC chapters across Canada, lawmakers from the provincial parliaments of Quebec and Ontario, as well as from the Municipal government of Montreal issued statements condemning Azerbaijan’s unsanctioned aggression. Members of Quebec’s National Assembly, Marwah Rizqy, Nicole Menard, Guy Ouellette, Christine St-Pierre, and Greg Kelley as well as MPP Aris Babikian of Ontario and Councilor Effie Giannou of Montreal condemned Baku’s aggression and stood in support of Armenia’s sovereignty and territorial integrity.

The Armenian National Committee of Canada and its network of chapters across the country sincerely thank all elected officials for their principled stance and steadfast support to Armenia and the Armenian-Canadian community during these difficult times.

VIENNA—In a fresh announcement on July 25, the OSCE Minsk Group Co-Chairs called for resumption of Karabagh settlement talks, but also, without specificity, said recent statements criticizing their joint efforts or seeking “unilateral changes” to the settlement process “are not conducive” to “constructive dialogue.”

“The Co-Chairs note that recent public statements criticizing the joint efforts of the co-chairing countries, and/or seeking unilaterally to establish new ‘conditions’ or changes to the settlement process format are not conducive to resuming a constructive dialogue,” said the OSCE Minsk Group Co-Chairs and the Personal Rep-

resentative of the OSCE Chairperson-in-Office (PRCIO) Andrzej Kasprzyk in a statement.

One can surmise that Co-Chairs’ warning was meant for Azerbaijan, whose president, Ilham Aliyev, on numerous occasions this month, has criticized the international mediators efforts calling them “meaningless” and has questioned their assessment that the Karabagh conflict cannot be resolved by military force, threatening to end the negotiations. Aliyev also pledged that Baku will do whatever it takes to not only “liberate” Artsakh but also Armenia, which he calls ancient Azerbaijani lands.

Less than a week after he

challenged the Minsk Group Co-Chairs, Azerbaijani forces launched a brazen attack on Armenia’s Tavush Province making several failed efforts to capture the Anvakh military outpost at the Armenia-Azerbaijan border.

The mediators welcomed the relative stability along the Armenia-Azerbaijan border and appealed to the sides to take advantage of this and prepare for “serious negotiations.”

“The Co-Chairs stress once more that refraining from provocative statements and actions, including threats or perceived threats to civilians or to critical infrastructure, is essential during this delicate period,” said the Co-Chairs and PRICO.

The Krouzian-Zakarian Armenian School and the Armenian community centre in San Francisco were defaced by pro-Azerbaijani graffiti.

These are just a few examples of how institutionalized hatred toward Armenians is manifesting itself around the world, with the implicit involvement of Azerbaijani state authorities, who, in an effort to mask their humiliating defeat on the battlefield, are targeting Armenian individuals and private or public establishments.

“Recently, we have witnessed violent incidents and attempts against Armenian citizens and members of Armenian communities in various countries around the world.

There have been cases of obstructing the normal work of the Armenian diplomatic missions and Armenian communities abroad, as well as the deliberate destruction of their personal and business property, which in some cases have threatened the security of the diplomatic staff,” read a statement issued by Armenia’s Foreign Ministry on Friday.

“Discriminatory measure are being carried out to disrupt Armenia’s trade and economic relations with different countries,” said the foreign ministry.

“The expanding geography of these acts and the fact of Azerbaijani officials are involved in these acts against the diplomatic missions of Armenia prove that

the aforementioned incidents are coordinated by Azerbaijan’s official state structures,” added the foreign ministry.

“We strongly condemn the instigation of ethnic clashes in different countries, which is another manifestation of Baku’s irresponsibility and is fully in line with the policy and rhetoric of the Azerbaijani leadership provoking hostility between the two peoples with disregard for geographical restrictions,” said the foreign ministry.

“We call on our compatriots to be vigilant, not to give in to any provocation, and in case of such situations to immediately contact the local law enforcement bodies, Armenian community institutions and Armenia’s diplomatic representatives,” concluded Armenia’s Foreign Ministry statement.



«ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»-ի ԿՐԹԱԹՈՇԱԿ

PASDERMAJIAN FOUNDATION SCHOLARSHIP FONDATION PASDERMAJIAN BOURSE D’ÉTUDES

«Բաստրմաճեան Հիմնադրամ»-ի 2020-2021 ուսումնական տարեշրջանի համալսարանական կրթաթոշակի դիմումագրերը պիտի ընդունուին մինչեւ՝ 1 Նոյեմբեր 2020

Թեկնածուն պարտի ըլլալ՝

- Համալսարանական ուսանող՝ Պսակաւոր, Մագիստրոս կամ Դոկտորական աստիճանի:
- Յաջող իր ուսումնական արդիւնքներուն մէջ եւ գործունեայ տեղական եւ ի մասնաւորի հայկական կազմակերպութիւններէ եւ միութիւններէ ներս:
- Շրջանաւարտ՝ Մեծն Մոնթրէալի մէջ գործող հայկական երկրորդական վարժարանէ մը: Եթէ վարժարանը այդ ուսումնական տարեշրջանի ընթացքին երկրորդական 5րդ կարգ չունի, ուրեմն տուեալ վարժարանի բարձրագոյն կարգի աշակերտները՝ շրջանաւարտ կը նկատուին:

Բարեհաճեցէ՛ք 2020-2021 տարեշրջանի դիմումագրերը պատուիրել կապուելով հետեւեալ ե-նամակի հասցէին՝ pasdermajian.scholarship@gmail.com

Նկատի պիտի առնուին միայն լրիւ ամբողջացած եւ ե-նամակով ուղարկուած դիմումագրերը, պահանջուած փաստաթուղթերով :



MARCHÉ ADONIS

Un univers de fraîcheur

Ste-Catherine - Griffintown - Anjou - Sauvé
Place Vertu - DDO - Brossard - Laval - Laval Est - Gatineau
Scarborough - Mississauga

www.groupeadonis.ca /



IT'S TIME TO TOYOTA

The all-new 2020 RAV4
